



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՍՈՒՍԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**ՆՇԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**(Ուսումնամեթոդական ուղեցույց )**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆՇԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

(32 ժամ)

Ծրագիրը նախատեսված է ԵՊՀ փիլիսոփայության և  
հոգեբանության ֆակուլտետի փիլիսոփայության բաժնի  
մագիստրատուրայի ուսանողների համար:

ԵՐԵՎԱՆ

«Լուսաբաց» հրատարակչություն

2016

2

ՀՏԴ 16:003(075.8)

ԳԱԴ՝ 87.4g73

Վ.301

Հրատարակության և Երաշխավորել ԵՊՀ  
փիլիսոփայության և հոգեբանության  
ֆակուլտետի խորհուրդը

Հեղինակ՝ ֆիլ. գիտ. թեկն. Ս.Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆ,

Վարդանյան Ս. Վ.

Վ.301 Եղանակաբանություն: Ուսումնամեթոդական  
ուղեցույց/ ԵՊՀ: Ս. Վ. Վարդանյան.- Եր.:  
«Լուսարաց» հրատ., 2016.- 64 էջ:

ՀՏԴ 16:003(075.8)

ԳԱԴ՝ 87.4g73

ISBN 978-9939-69-162-6

© Լուսարաց, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....4

Դասընթացի հիմնական նպատակները ..... 4

Դասընթացի վերջնական արդյունքները ..... 5

Դասընթացի շրջանակներում ձեռք բերված  
գիտելիքի ստուգման համակարգ ..... 5

Դասավանդման հիմնական ձևը ..... 6

ԴԱՍԸՆԹԱՅԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ 1. Նշանագիտության առարկան  
և ծագումը ..... 7

ԹԵՄԱ 2. Նշան և նշանակություն ..... 11

ԹԵՄԱ 3. Լեզվական նշան ..... 17

ԹԵՄԱ 4. Նշանային համակարգեր: Լեզուն որպես  
նշանային համակարգ ..... 24

ԹԵՄԱ 5. Նշանագիտության կառուցվածքը ..... 34

    § 1. Գաղափար սեմիոզիսի մասին ..... 34

    § 2. Սինտակտիկա ..... 36

    § 3. Սեմանտիկա ..... 41

    § 4. Պրագմատիկա ..... 51

Հարցեր և առաջադրանքներ ..... 58

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նշանագիտությունը տալով նշանների և նշանային համակարգերի մասին ընդհանուր գիտելիք՝ վերաբերում է մեր իրականության բոլոր բնագավառներին: Նշանային համակարգերն աշխարհի որոշակի մոդելներն են, որոնք հնարավորություն են տալիս աշխարհը պատկերացնել առավել կարգավորված և հասկանալի: Դրա կարևորությունն ակնհայտ է հատկապես ժամանակակից աշխարհում, քանի որ քաղաքակրթության զարգացումն անընդհատ ավելացնում է նշանային հարաբերությունների ծավալը, որոնք ավելի են շեշտադրում նշանագիտական մոտեցումների անհրաժեշտությունը:

### Դասընթացի հիմնական նպատակները

Քանի որ նշանագիտությունը մետագիտական բնագավառ է, դասընթացը նպատակ ունի.

- ❖ ցույց տալ նշանագիտության որպես նշանների ընդհանուր տեսության տեղը գիտելիքի ժամանակակից համակարգում,
- ❖ ծանոթացնել նշանագիտության հիմնական տերմինների ու հասկացությունների բովանդակությանը,
- ❖ բացահայտել նշանագիտական վերլուծության մեթոդաբանական նշանակությունը:

## **Դասընթացի վերջնական արդյունքները**

- ❖ Նշանագիտական վերլուծության հմտությունների ձեռքբերում
- ❖ Բնագրերի հետ աշխատելու կարողությունների զարգացում

## **Դասընթացի շրջանակներում ձեռք բերված գիտելիքի ստուգման համակարգ**

Դասավանդվող առարկայի գնահատման համար հիմք է հանդիսանում «Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք. 2011թ.»:

Գնահատման համակարգն ընդգրկում է հետևյալ բաղադրիչները.

- ❖ դասերին մասնակցություն՝ 2 միավոր: Ենթադրվում է ուսանողի ներկայությունը, ներգրավվածությունը ինտերակտիվ դասախոսության քննարկումներին և հանձնարարությունների կատարմանը,
- ❖ մեկ ընթացիկ գրավոր ստուգում, որը գնահատվում է առավելագույնը՝ 4 միավորով: Գրավոր ստուգումը ենթադրում է հարցաշարում ընդգրկված հիմնահարցերի մեկնաբանությունը հանձնարարված գրականության շրջանակներում և թեստային աշխատանք,

- ❖ մեկ ընթացիկ բանավոր ստուգում, որը ևս գնահատվում է առավելագույնը՝ 4 միավորով: Բանավոր հարցման ժամանակ ուսանողները ներկայացնում են հարցաշարում ընդգրկված որևէ հիմնախնդրի վերլուծություն, որն ընտրվում է պատահականության սկզբունքով,
- ❖ ամփոփիչ բանավոր քննություն, որը գնահատվում է առավելագույնը՝ 10 միավորով:

### **Դասավանդման հիմնական ձևը**

Դասընթացի ընդհանուր ժամաքանակը 32 ժամ է, որն ընդգրկում է միայն դասախոսություններ: Ուսանողների տեսական պատրաստվածությունն ապահովելու և հիմնախնդիրներն առավել հասանելի դարձնելու համար կիրառվում է դասախոսությունների ինտերակտիվ ձևը: Նախապես հանձնարարվում է թեմային վերաբերող գրականությունը, առաջին դասաժամին տրվում է թեմայի պասսիվ շարադրանքը, իսկ երկրորդ դասաժամին ծավալվում է ակտիվ քննարկում՝ գրականության մեջ ներգրավված տեսակետների ընդգրկմամբ:

Մասնագիտացման ծրագրի շրջանակներում առարկային տրամադրվում է 3 կրեդիտ:

## **ԹԵՄԱ 1. Նշանագիտության առարկան և ծագումը**

Նշանագիտությունը համեմատաբար նոր գիտություն է, որն առաջացել է XX-րդ դ. դարասկզբին: ***Ինչո՞ւ առաջացավ նշանագիտությունը: Արդյո՞ք դա բխում էր գիտական գիտելիքի զարգացման օբյեկտիվ անհրաժեշտությունից:***

Իհարկե, նշանագիտության առաջացումը պատահական երևույթ չէր, քանի որ գիտության երկու՝ միմյանցից միանգամայն տարբեր բնագավառներում՝ կառուցված-քային լեզվաբանության և մաթեմաթիկական տրամաբանության մեջ կատարվող հետազոտություններն ուղղակիորեն դրեցին դրա առաջացման հրամայականը:

Ժամանակակից փիլիսոփայության մեջ նշանագիտության հարցերին ամենամեծ ուշադրությունը դարձվել է տրամաբանական պոզիտիվիզմում: Դա պայմանավորված էր երկու հանգամանքով.

1. քանի որ տրամաբանական պոզիտիվիզմի ներկայացուցիչները փիլիսոփայությունը հանգեցնում էին գիտության լեզվի վերլուծությանը, նրանց առջև կանգնած էր լեզվի բնույթի և դրա հետ կապված՝ նաև նշանի հիմնախնդիրն ընդհանրապես,
2. տրամաբանական պոզիտիվիզմը վերլուծելով գիտական գիտելիքի կառուցվածքը՝ օգնության էր դիմում ժամանակակից ձևայնացված տրամաբանությանը, որն ինչպես հայտնի է, իր առարկայի ուսումնասիրությունն իրականացնում է



սեմանտիկական և սինտակտիկական համակարգերի միջոցով: Հետևաբար, հարց առաջացավ այդպիսի համակարգերում նշանի կիրառության առանձնահատկության մասին և դրա հետ կապված՝ նաև նշանի յուրահատկության մասին ընդհանրապես:

Առանձնապես ուշադրության են արժանի Ռուդոլֆ Կառնապի «Սեմանտիկայի ներածություն» ու «Նշանակություն և անհրաժեշտություն» աշխատանքները: Սակայն, չնայած տրամաբանական պոզիտիվիզմում արված հետազոտություններին՝ դրա սահմաններում դեռ վաղ է խոսել նշանագիտության որպես առանձին գիտություն առաջացման մասին:

Նշանագիտության առաջացման ուղղությամբ ընթանում էին ոչ միայն փիլիսոփաները, այլև լեզվաբանները: Հատկանշական է Ֆերդինանդ դը Սոսյուրի «Ընդհանուր լեզվաբանության դասընթաց» աշխատությունը, որտեղ նա խոսում է մի գիտության մասին, որն ուսումնասիրում է նշանների կյանքը հասարակական կյանքի ներսում: «Այն պետք է բացահայտի, թե ինչ են նշանները, ինչ օրենքներով են դրանք ղեկավարվում»: Նշանների այդ ընդհանուր գիտությունը Սոսյուրն անվանեց «սեմիոլոգիա» (նշանաբանություն), սակայն այդ անվանումը լայն կիրառություն չստացավ: Սեմիոլոգիա (նշանաբանություն), ինչպես նաև սեմիոտիկա (նշանագիտություն) անվանումների հիմքը semeion-նշան հունարեն բառն է, որը սկզբնապես նշանակել է սիմպտոմների մասին գիտություն բժշկության մեջ:

Նշանագիտության որպես գիտության հիմնադիրը համարվում է Չարլզ Մորիսը: Նա միավորեց տրամաբանական պոզիտիվիզմը բիհեվիորիստական էմպիրիզմի ու պրագմատիզմի հետ՝ զարգացնելով նշանների վերաբերյալ մի տեսություն, որում ընդգծեց նշանի հարաբերությունը ա) օբյեկտի, բ) մարդու, գ) այլ նշանների նկատմամբ, ըստ որի առանձնացվեցին նշանագիտության երեք բաժինները՝ սեմանտիկական, սինտակտիկական և պրագմատիկական: 1938թ.-ին հրատարակվեց նրա՝ «Նշանների տեսության հիմունքները» ոչ մեծ գրքույկը, որն ըստ էության նշանագիտության համառոտ ակնարկ է:

Այսպիսով, նշանագիտության զարգացման գործում ամենամեծ ավանդը եվրոպական գիտության մեջ պատկանում է Ֆ. դը Մոսյուրին, իսկ ամերիկյանում՝ Չ.Պիրսին: Նշանագիտությունն առաջացավ որպես *մետազգիտություն*, որի հասկացությունները հիմնվում են մասնավոր գիտական տվյալների ու դիտարկումների վրա: Առանց նշանների օգտագործման հնարավոր չէին լինի ոչ կենդանիների վարքի քիչ թե շատ բարդ ձևերը, ոչ մարդու պրակտիկ ու տեսական գործունեությունը: Համակարգչի գործունեությունը ևս ամբողջովին հանգում է մի համակարգի նշաններն ըստ համապատասխան ծրագրի այլ համակարգի վերածելուն: Այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ նշանները շատ գիտություններում վերլուծության առարկա դառնալով կարիք ունեն այնպիսի մետատեսական վերլուծության, ինչպես նշանագիտական

է: Նշանագիտական հետազոտությունների մասնավոր ոլորտներն են՝

- ❖ կենսասեմիոտիկական
- ❖ էթնոսեմիոտիկական
- ❖ լեզվաբանական սեմիոտիկական
- ❖ արվեստի և գրականության սեմիոտիկական և այլն:

Այս բնագավառներից յուրաքանչյուրը նշանը դիտում է դրա կիրառության որոշակի տեսանկյունից: Լեզվաբանությունը հետաքրքրվում է հիմնականում լեզվական նշաններով: Մաթեմատիկական տրամաբանությունը ուշադրություն է դարձնում միայն նշանների դերին սինտակտիկական և սեմանտիկական այն համակարգերի կառուցման գործում, որոնց միջոցով նա հետազոտում է տրամաբանության օրենքները: Հոգեբանության մեջ ևս կենդանիների հոգեբանությունն ուսումնասիրում է նշանների գործառնության առանձնահատկությունները կենդանիների մոտ, մանկական հոգեբանությունը հետևում է նշանային իրավիճակների առաջացումն ու զարգացումը երեխայի մոտ և այլն: Նշանի վերաբերյալ նշանագիտական մոտեցումը տարբերվում է իր *սինթետիկ* բնույթով: *Նշանագիտությունն ուսումնասիրում է ոչ թե կոնկրետ նշանները և կոնկրետ նշանային իրավիճակները, այլ սահմանում է նշանի հասկացությունն ընդհանրապես, նկարագրում է տիպիկ նշանային իրավիճակները, ուսումնասիրում է նշանային համակարգերը, նշանների փոխհարաբերությունը դրանցում, դրանց կիրառության առավել ընդհանուր եղանակները և այլն:*

## Գրականություն

Ֆ. դը Սոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Եր., էջ 31-34:

А.А.Ветров. Семиотика и ее основные проблемы. М., 1968, с.3-17.

Ю.С.Степанов. Семиотика. М., 1971, с. 6-27, 27-78.

## ԹԵՄԱ 2. Նշան և նշանակություն

Նշանի հասկացությունը նշանագիտության կենտրոնական հասկացություններից է, այդ պատճառով նախ անհրաժեշտ է պարզել, թե *ի՞նչ է նշանը*, քանի որ հաճախ հարց է առաջանում, թե որն է տարբերությունը նշանների և ոչ-նշանների միջև: Դեռևս Օգոստինոս Երանելին էր զգացել իրերի (առարկաների) և նշանների տարբերակման այս դժվարությունը: Մենք ընդունակ ենք ճանաչել իրերը և խոսել դրանց մասին միայն նշանների օգնությամբ՝ առարկաները դրանց նշաններով փոխարինելու շնորհիվ: Հետագայում այդ միտքը զարգացվեց Չ.Պիրսի կողմից: Բայց մյուս կողմից այն, ինչը ընկալվում էր որպես նշան, որոշ դեպքերում կարող է ընկալվել որպես սովորական իր: Օր., լուսամուտին դրված ծաղկամանը, որը հայտնի ֆիլմում Շտիրլիցի համար նշանի իմաստ ուներ, այլ իրավիճակում կարող է դիտվել պարզապես որպես ինտերիերի բաղադրատարր-իր: *Ուրեմն ո՞ր իրը կարող է դիտվել որպես նշան:*

Նախ, անհրաժեշտ է նշել, որ նշանի գործառույթ իրագործող իրը զգայորեն ընկալվող առարկա է: Բայց նշան-իրը շատ ավելին է քան պարզապես իրը: Վերջինս ուղղակի ընկալվում է, այն դեպքում, երբ նշանը կարիք ունի հասկացվելու: **Այն նշան է դառնում միայն այլ առարկայի հետ փոխհարաբերության մեջ, քանի որ նշանը միշտ ինչ-որ բանի նշան է:** (Օր., ծուխը կրակի նշան է:) Հենց ուրիշի նկատմամբ այդ հարաբերությունն էլ մի առարկան այլ առարկայի նշան է դարձնում: Իսկ ինչպիսի՞ն է այդ հարաբերության բնույթը: Ամենաընդհանուր պատասխանը կարող է լինել այն, որ առաջին առարկան նշանակում է երկրորդ առարկան: Բայց, ակնհայտ է, որ «նշանակել» բառն այստեղ նույնքան ինտուիտիվ է ընկալվում, որքան «նշան»-ը, հետևաբար նման պատասխանը հարցը չի լուծում, սակայն դնում է հիմնախնդիրը. այնտեղ, որտեղ մի առարկան գործառնվում է որպես այլ առարկայի նշան, առկա է **նշանակման** հարաբերությունը, որը ոչ այլ ինչ է, քան մի առարկայի դեպի այլ առարկան ուղղորդելու գործողությունը: **Նշանայնությունն** առաջանում է իրականության ցանկացած մոդելավորման դեպքում, քանի որ իրականության և նրա նկարագրության միջև կա որոշակի տարբերություն: Նշանը, կարելի է ասել, այն կամուրջն է, որ այս երկու իրողությունները՝ օբյեկտիվը և սուբյեկտիվը, կապում է միմյանց հետ:

Իսկ ո՞ր իրավիճակում է մի առարկան նշանակում այլ առարկա, այսինքն դառնում դրա նշանը: **Ո՞րն է նշանային իրավիճակը:**

Նշանային իրավիճակը բնութագրվում է հետևյալ տարրերի առկայությամբ.

- ❖ առարկա, որը որոշակի պայմանների դեպքում նշանի գործառույթ է կատարում,
- ❖ առարկա, դեպի որը ուղղորդում է նշանը,
- ❖ իմաստ, որի օգնությամբ տեղի է ունենում ուղղորդումը,
- ❖ հասցեատեր (ադրեսատ), որը նշանի գործառույթ կատարող առարկայից ուղղորդվում է դեպի մյուս առարկան:


Շատ հաճախ համարում են, որ նշանն իրենով փոխարինում է նշանակվող առարկան: Արդյո՞ք դա այդպես է: Իրականում, եթե մի առարկա համարվում է մյուսի փոխարինողը, ապա գործողությունը տեղափոխվում է փոխարինողի վրա, որն այլ օբյեկտ է: Օր., կարող ենք կարագը փոխարինել մարգարինով: Մինչդեռ նշանային իրավիճակի դեպքում նշանն առաջացնում է մի գործողություն, որի օբյեկտը ոչ թե նշանն է, այլ նշանակվող առարկան: Նշանի գործառույթն այն է, որ ուղղորդի դեպի նշանակվող առարկան, դեպի այն ուղղի մարդու գործողություններն ու մտքերը:

Հաջորդ կարևոր հարցը, որ առաջանում է նշանի հետ կապված, ***նշանի կառուցվածքն*** է: Գոյություն ունեն նշանի կառուցվածքն արտահայտող երկու մոդելներ՝ դիադիկ (երկանդամ) և տրիադիկ (եռանդամ):

Նշանի եռանդամ մոդելն արտահայտվում է ***նշանագիտական եռանկյունու*** միջոցով: Այն ունի կոմունիկատիվ գործառույթ, քանի որ նշանն այստեղ

դիտվում է որպես ինֆորմացիայի փոխանցման միջոց, որպես մատերիական միջնորդ առարկայի ու հասկացության միջև, որի շնորհիվ մի մարդը կարող է որոշակի ինֆորմացիա փոխանցել այլ մարդու: Այս մոդելը երբեմն անվանում են նաև սեմանտիկական եռանկյունի: Եռանկյան երեք գագաթները ներկայացնում են տրամաբանական-լեզվաբանական երեք կատեգորիաներ.

1. զգայորեն տրվող իրը, որը տրամաբանության մեջ կոչվում է «դենոտատ», իսկ լեզվաբանության մեջ՝ «ռեֆերենտ»,
2. տվյալ իրի իդեալական վերարտադրությունը մարդու գիտակցության մեջ, որը տրամաբանության մեջ կոչվում է հասկացություն, իսկ լեզվաբանության մեջ հաճախ անվանում են «իմաստ»,
3. նշանը կամ եթե դա լեզվական նշան է՝ «անունը», «բառը», «լեքսեման»:



Այս կատեգորիաների միջև առկա են հետևյալ հարաբերությունները. ա) նշանը նշանակում է առարկան, բ) առարկան արտահայտվում է հասկացության միջոցով, հասկացությունը արտացոլում է առարկան, գ) հասկացությունը միջնորդավորում է նշանի և առարկայի կապը, դ) նշանը բովանդակում է հասկացությունը, այսինքն հասկացությունն արտահայտվում է նշանում:

Նշանի երկանդամ մոդելը մշակել է Ֆ.դը Մուսյուրը: Ըստ նրա, նշանը նշանակիչի և նշանակյալի միասնություն է: Նշանի այս երկու կողմերը հնարավոր չէ միմյանցից անջատել, ինչպես անհնար է թղթի մի երեսը պատռելով անջատել մյուսից: Նշանակիչն այն է, ինչն արտահայտում է տվյալ նշանը, դա արտահայտման պլանն է, այսինքն նշանակիչն ու արտահայտման պլանը գտնվում են միևնույն հարթության վրա: Իսկ նշանակյալը համապատասխանում է նշանի բովանդակությանը և կազմում է բովանդակության պլանը՝ գտնվելով նրա հետ միևնույն հարթության վրա: Նշանակիչի և նշանակյալի փոխհարաբերությունը կարելի է համեմատել ձևի և բովանդակության կատեգորիայի հետ: Օր., «Կարմիր խաչ» կազմակերպության նշանի արտահայտման պլանը կարմիր խաչի պատկերն է, իսկ բովանդակության պլանը՝ համաշխարհային բարեգործական կազմակերպությունը:

**Նշանների դասակարգումը:** Նշանները կարելի է դասակարգել տարբեր չափանիշների հիման վրա: Ըստ ձևի կարելի է առանձնացնել բնական և արհեստական նշանները: Նկատի ունենալով, թե զգայական ո՞ր օրգանի միջոցով է մարդն ընկալում նշանը, կարելի է խոսել հինգ



տիպի նշանների մասին՝ տեսողական, լսողական, համի, հոտի, շոշափելիքի: Կարելի է բաժանել լեզվական նշանները ոչ-լեզվականից և այլն: Կարևորագույն նշաններ են բնական լեզվի բառերն ու արտահայտությունները: Նշանագիտության համար բազային նշանակություն ունի Չ.Պիրսի դասակարգումը: Նշանը դիտելով որպես նշանակվող օբյեկտի փոխարինող՝ նա նշանները դասակարգել է ըստ դրանց փոխհարաբերության՝ տարբերակելով նշան-պատկերները, նշան-ցուցիչները և նշան-խորհրդանշանները:

Նշան-պատկերների համար բնորոշ է նշանակվող օբյեկտի հետ որոշակի նմանությունը: Օր., եղանակի կանխատեսումները ներկայացնելիս օգտագործվում է արևի պատկերը՝ արևոտ եղանակը ցույց տալու համար, կամ անձրևի պատկերը՝ անձրևոտ եղանակը ցույց տալու համար:

Նշան-ցուցիչները բնորոշվում են նշանի և օբյեկտի սահմանակցությամբ, այսինքն՝ դրանք օբյեկտի հետ անպայման պետք է որոշակի ընդհանուր բնութագրություն ունենան, բայց ի տարբերություն նշան-պատկերների՝ բնութագրությունը պետք է լինի ոչ թե հարաբերական, այլ իրական: Օր., ծուխը որպես կրակի նշան, գնդակի անցքը որպես կրակոցի նշան, որոտը որպես կայծակի նշան և այլն:

Նշան-սիմվոլները նշանի և օբյեկտի միջև որևէ կապ չեն արտահայտում: Դրանք միմյանց հետ կապված են որոշակի կոնվենցիայի սահմաններում, նախնական պայմանավորվածությամբ: Օր., պետական գերբերը,

դրոշները, մաթեմատիկական նշանները, էթիկետի նորմերը և այլն:

### Գրականություն

Ֆ. դը Սոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Եր., էջ 104-107:

А.А.Ветров. Семиотика и ее основные проблемы. М., 1968, с.19-66.

Л.О.Резников. Гносеологические вопросы семиотики. Ленинград, 1964, с. 8-70.

### ԹԵՄԱ 3. Լեզվական նշան

Լեզվական նշանները խիստ տարբերվում են ոչ-լեզվական նշաններից: *Ի՞նչ է լեզվական նշանը, ո՞րն է նրա առանձնահատկությունը*: Լեզվական նշանի կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ այն ծառայում է որպես հաղորդակցության միջոց, հաղորդակցական գործառույթ է կատարում: Իսկ ոչ լեզվական նշանը նման գործառույթ չունի: *Ոչ լեզվական* նշան է աշնանային քամին, որը դեղնած տերևները թափում է ծառերից, այդ դեպքում ասում են, որ դա ձյան գալու նշան է: *Լեզվական* նշան է մեղուների պարը, որով նրանք միմյանց ինչ-որ բան են հաղորդում: Լեզվական նշանների վերոհիշյալ գործառույթը հիմք է հանդիսանում խոսելու ժեստերի լեզվի, պարի լեզվի, երաժշտության լեզվի, թռչունների լեզվի մասին և այլն:

*Մարդկային հաղորդակցության* ընթացքում նախ՝ հաղորդակցության մասնակիցներից մեկի գիտակցության մեջ առաջանում է հասկացությունը, որը ուղեղում գուգորդվում է դրա արտահայտությունը ծառայող լեզվական նշանների պատկերների, այն է՝ դրանց լսողական պատկերների հետ: Թե հասկացությունը, թե դրա լսողական պատկերը ամբողջովին հոգեկան երևույթ են, որոնց հաջորդում է ֆիզիոլոգիական պրոցեսը. ուղեղը հնչարտաբերական օրգաններին հաղորդում է համապատասխան գրգիռ, որը ձայնային ալիքների ձևով տարածվում է: Լսողների մոտ պրոցեսն ընթանում է հակառակ ուղղությամբ. տեղի է ունենում լսողական պատկերի ֆիզիոլոգիական փոխանցում ականջից ուղեղին. ուղեղում առաջանում է այդ պատկերի հոգեկան գուգորդումը համապատասխան հասկացության հետ: Այս ամբողջ գործընթացում կարող ենք առանձնացնել ինչպես հոգեկան և ոչ հոգեկան մասերը, այնպես էլ արտաքին մասը, որը բերանից ականջ գնացող հնչյունների առաջացրած ձայնային ալիքներն են, և ներքին մասը, որը ընդգրկում է մնացածը: Հարց է առաջանում.


***Արդյո՞ք կարելի է լեզվական նշանի ներքին կողմ համարել հոգեկանը, իսկ արտաքին կողմ՝ այն ինչ ոչ-հոգեկան, մատերիական է:***

Լեզվական նշան ասելով սովորաբար հասկանում են բառը: Մարքսիստական գրականության մեջ հաճախ կարելի է հանդիպել այն պնդմանը, որ բառի արտաքին կողմը մատերիական է: Այդ բնութագրությունն, իհարկե, իմաստ ունի գրավոր խոսքի և հնչողության նկատմամբ,

երբ մարդկային հաղորդակցության ընթացքում միտքը «օբյեկտիվանում» է և բառը պետք է հասանելի լինի զգայական ընկալման, այսինքն՝ տեսողության և լսողության համար: Իսկ այդ դեպքում ի՞նչ պնդում պետք է անել **ներքին խոսքի** ժամանակ, որը կարելի է բնութագրել որպես ինքնահաղորդակցություն:

Միանգամայն հակառակ տեսակետ է արտահայտում Ֆ. Դե Սոսյուրը: Ըստ նրա, նշանը երկակի էություն է, որն իր մեջ մարմնավորում է այն միասնությունը, որ գոյություն ունի նշանակիչի և նշանակյալի, արտահայտության պլանի և բովանդակության պլանի միջև, իսկ բառը լսողական (ակուստիկ) պատկերի և հասկացության միասնությունն է:

հասկացության միասնությունն է: |



Դրանով իսկ Սոսյուրը առարկում է նշանակիչը որպես մատերիական երևույթ ընդունելու դեմ, իսկ լեզվական նշանը՝ բառը վերածվում է երկկողմանի հոգեկան իրողության: Իհարկե նա իրավացի չէր, քանի որ դրանով իսկ նա փաստորեն անտեսում էր բառի գոյության «օբյեկտիվացված» ձևը: Բայց մյուս կողմից՝ բառը մարդու կողմից օգտագործվում է նաև ինքնահաղորդակցության պրոցեսում որպես ներքին խոսք, որի դեպքում գործ ունենք ոչ թե հնչյունային կոմպլեքսների, այլ դրանց մտային

արտացոլումների հետ, որոնք իրենցից ներկայացնում են լսողական (ակուստիկ) պատկերներ: Մակայն լսողական պատկերը իմացաբանական առումով արտացոլում լինելով՝ չի կարող բնութագրվել որպես մատերիական երևույթ, հետևաբար նաև որպես բառի «արտաքին» կողմ: Մինչդեռ եթե փորձում ենք տալ լեզվական նշանի «արտաքին» կողմի ընդհանուր բնութագիրը, ապա այն պետք է վերաբերի բառի գոյության երկու ձևերին էլ՝ և «օբյեկտիվացվածին», և ներքին խոսքին: Այս դեպքում հարց է առաջանում. ***արդո՞ք ներքին խոսքի ժամանակ լսողական պատկերը կարող է նշան հանդիսանալ:*** Չէ՞ որ այդ դեպքում այն զգայորեն ընկալելի չէ:

***Իսկ ինչպիսի՞ն է նշանակիչը նշանակյալին միացնող կապը լեզվական նշանի դեպքում:***


Այս հարցի հետ կապված՝ Ֆ.դը Սոսյուրն առաջադրեց ***լեզվական նշանի պայմանականության սկզբունքը***, որը լայն տարածում ստանալով, ոչ միայն չի վիճարկվում որևէ մեկի կողմից, այլ ընդունվում է որպես ակնհայտ ճշմարտություն: Ըստ նրա, նշանակիչը նշանակյալին միացնող կապը պայմանական է: Ինչպես արդեն նշվել է, նա բառը դիտում էր որպես լսողական պատկերի և իմաստի միասնություն՝ վերջինիս տակ նկատի ունենալով հասկացությունը: Քանի որ ըստ նրա, լսողական պատկերը նշանակիչն է, իսկ հասկացությունը՝ նշանակյալը, ապա լեզվական նշանի պայմանականությունը բխում է նրանից, որ դրանք միմյանցից անկախ են, նշանակիչը պայմանավորված չէ նշանակյալով: Լեզվական նշանը մոտիվացված չէ, այն պայմանական է այն առարկայի

նկատմամբ, որն անվանում է: Այն պայմանական է «նշանակյալի նկատմամբ, որի հետ իրական աշխարհում որևէ բնական կապ չունի»: Իրոք, մենք մեծ մասամբ չենք կարող ասել, թե այս կամ այն առարկան ինչու է անվանվում այսպես, այլ ոչ թե այնպես: Ըստ նրա, «քույր» հասկացությունը ներքնապես որևէ կերպ կապված չէ հնչյունների «ք-ու-յ-ր» հաջորդականության հետ, որը նրա նշանակիչն է: Այդ հասկացությունը նույն հաջորդությամբ կարող էր ներկայացվել ցանկացած նշանակիչով, ինչի մասին վկայում են լեզուների միջև տարբերությունները և տարբեր լեզուների գոյությունը: Եթե լեզվում նշանակիչը որպես բառի «արտաքին» կողմ պայմանավորված լիներ «ներքինով»՝ հասկացությամբ, ապա յուրաքանչյուր առարկա կպահանջեր միայն մեկ՝ իր բնույթին համապատասխանող անվանում: Այդ դեպքում աշխարհում գոյություն կունենար միայն մեկ եզակի լեզու և չէին լինի տարբեր ազգային լեզուներ:

Սակայն լեզվական նշանի պայմանականության սկզբունքը չի կարելի գերազանահատել, քանի որ ազգային լեզուները նշանային համակարգեր են, և որպես համակարգ ունեն զարգացման իրենց ներքին օրենքները, որոնք արտահայտելով նշանների փոխկապվածությունները, նույնպես պայմանավորում են լեզվական նշանի «արտաքին»՝ հնչյունային կողմը: Օր. «մեջ» բառը անգլերենում արտահայտվում է «in» նախդիրով, ռուսերենում՝ «в»-ի միջոցով, հայերենում կարող է ստանալ «ում» վերջավորությունը՝ դարակում, գրպանում և այլն: Հետևաբար, լեզվական նշանի պայմանականության


սկզբունքը ոչ թե բացարձակ է, այլ՝ հարաբերական: Ավելին, նշանակիչի և նշանակյալի՝ անունի և հասկացության կապն անհրաժեշտ բնույթ ունի, քանի որ մեր գիտակցության մեջ չկան դատարկ ձևեր, անուն չստացած հասկացություններ: Մեր բանականությունն ընդունում է միայն այն հնչյունային ձևը, որը հիմք է ծառայում որոշակի պատկերացման համար և մերժում է այն, ինչ անհայտ է և օտար: Նշանակիչը մտքի հնչյունային թարգմանությունն է, իսկ նշանակյալը՝ նշանակիչի մտային համարժեքը: Այսպիսով, լեզվական նշանը մի կողմից պայմանական է, բայց մյուս կողմից՝ մոտիվացված է, և նրանից ճիշտ օգտվելու համար պետք է իմանալ նրա նշանակությունը:

բ) Սոսյուրը բացի լեզվական նշանի նշանակությունից առանձնացնում է նաև նրա **արժեքը**: Լեզվական նշանի նշանակությունը արտահայտվում է հետևյալ սխեմայով.



Ինչպես երևում է սխեմայից, բառի սահմաններում նշանակությունը լսողական պատկերի և հասկացության համապատասխանությունն է: Բայց դա այն դեպքում, եթե բառը դիտվում է որպես ինքնաբավ և ինքն իր մեջ պարփակված: Իսկ եթե լեզուն դիտում ենք որպես

համակարգ, որում նշանները գտնվում են այլ նշանների հետ փոխհարաբերության մեջ, առաջ է գալիս **բառի արժեքի** հարցը: Մտնելով համակարգի կազմի մեջ՝ բառն օժտվում է ոչ միայն նշանակությամբ, այլև արժեքով, ինչն արտահայտվում է հետևյալ սխեմայով.



Սա նշանակում է, որ մի կողմից հասկացությունը մեզ ներկայանում է որպես նշանի ներսում գտնվող և լսողական պատկերի հետ համապատասխանության մեջ գտնվող իրողություն, իսկ մյուս կողմից՝ նշանի երկու բաղադրիչներն իրար միացնող այդ հարաբերությունն իր հերթին նման ձևով և նույն չափով համապատասխանության մեջ է լեզվի այլ նշանների հետ, ինչով և պայմանավորվում է նրա արժեքը: Օր., շախմատի ձին առանձին վերցված կարող է խաղի տարր համարվել: Բհարկե ոչ, քանի որ գուտ նյութական առումով, իր վանդակից և խաղի կանոններից դուրս այն խաղացողի համար իրենից ոչինչ չի ներկայացնում և իրական ու կոնկրետ տարր է դառնում՝ միայն իր արժեքը ստանալով և վերջինիս հետ ամբողջություն կազմելով: Ենթադրենք, որ խաղի ժամանակ այդ խաղաքարը կոտրվում կամ կորչում է. կարելի՞ է արդյոք այն փոխարինել այլ համարժեք խաղաքարով: Բհարկե. ոչ միայն մի ուրիշ ձի, այլ նույնիսկ նրա հետ որևէ նմանություն չունեցող խաղաքար նրան համարժեք կհայտարարվի, եթե վերագրվի նույն արժեքը:



Ի տարբերություն լեզվական նշանի նշանակյալի, **նշանակիչը գծային բնույթ ունի**: Քանի որ նշանակիչը լսողական բնույթ ունի, այն ծավալվում է ժամանակի մեջ, այսինքն՝ մենք արտաբերում ենք բառը բառի հետևից, հնչյունը հնչյունի հետևից, այլ ոչ թե միաժամանակ:

#### Գրականություն

Ֆ. դը Սոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Եր., էջ 104-134, 174-180:

Л.А.Абрамян. Гносеологические проблемы теории знаков. Ер., 1965, с.114-158.

Р.Барт. Основы семиологии. В кн.: “Структурализм: «за» и «против»”. М. 1975, сс.127

### **ԹԵՄԱ 4. Նշանային համակարգեր: Լեզուն որպես նշանային համակարգ**

Նշանային համակարգեր են համարվում մեկ կամ մի քանի տիպի նշանների այնպիսի ամբողջությունը, որում գոյություն ունի նշանների զուգորդումը կարգավորող կանոնների համակարգ: Մարդը շրջապատված է նշանային համակարգերով, որոնք տալիս են աշխարհի որոշակի մոդելներ: Դրանք ինֆորմացիայի փոխանակմանը ծառայող մատերիական միջնորդներ են, և քանի որ մարդկային գործունեության բազմազանությունը իրագործվում է հաղորդակցության պայմաններում՝ այն ամենը, ինչ անում է մարդը, կարող է մեկնաբանվել

նշանագիտական տեսանկյունից: Ավելին, նշանային համակարգերը նույնիսկ հնարավորություն են տալիս մարդկանց դրսևորել առավել արդյունավետ վարքագիծ: Օր., հագուստի նշանային համակարգի համապատասխան կանոններին հետևելը կարող է մարդուն օգնել աշխատանքի ընդունվել կամ որպես յուրային դիտվել տարբեր կոլեկտիվներում (ասենք պանկերի մոտ):

***Կարևորագույն նշանային համակարգ է լեզուն:*** Նշանագիտությունը փաստում է աշխարհում գոյություն ունեցող լեզուների հսկայական բազմաքանակությունը: Ըստ խորհրդային անվանի նշանագետ Յու.Լոտմանի, յուրաքանչյուր մշակույթ շահագրգռված է դրանում, ինչքան մեծ է այդ բազմաքանակությունը, այնքան հարուստ է մշակույթը, քանի որ կարող է արտահայտվել տարբեր լեզուներով: Այդ պատճառով, ասում են երաժշտության լեզու, բալետի լեզու, կինոյի լեզու, ժեստերի լեզու և այլն: Բայց ամենահիմնականն, իհարկե, վերբալ համակարգերն են, որոնք ընդգրկում են բնական խոսակցական լեզուները, ինչպես նաև գրառման համակարգերը: Ցանկացած այլ լեզվով արտահայտված ինֆորմացիան կարող է «թարգմանվել» բնական լեզվի: Օր., կարելի է նկարագրել որևէ կտավ, դրանով իսկ գեղանկարի լեզուն «թարգմանելով» բնական լեզվի: Կամ կարելի է անել հակառակը՝ կտավի վրա վերարտադրել գրական ստեղծագործության որևէ դրվագ:

Բնական լեզուները պատմականորեն ձևավորված նշանային համակարգեր են, որի վրա հիմնված է այդ լեզվով խոսող ժողովրդի մշակույթը: Ի տարբերություն

արհեստական կամ ձևայնացված լեզուների, բնական լեզուն նշանային բաց համակարգ է, որն ընդունակ է անսահմանափակ զարգանալու: Մարդկանց կյանքի նոր երևույթները, գիտության և տեխնիկայի նոր հայտնագործությունները ամրագրվում են նոր բառերով՝ լրացնելով լեզվի բառապաշարը, իսկ անցյալ պայմանների հետ կապված բառերը կամ կիրառությունից դուրս են գալիս, կամ փոխում են իրենց նշանակությունը: Չնայած դրան, հիմնական բառապաշարը դարերի ընթացքում պահպանվում է և դրա շնորհիվ ապահովվում է սերունդների փոխըմբռնումը:


Բայց *ինչպե՞ս է պահպանվում լեզուն, ի՞նչ ձևով է զարգանում*: Ֆ. դը Սոսյուրը առանձնացնելով *լեզուն և խոսքը*՝ ընդգծեց, որ լեզուն կրող յուրաքանչյուր մարդ գործունի խոսքի, այլ ոչ թե լեզվի հետ: Այն, ինչ մենք լսում, արտաբերում, գրում կամ կարդում ենք, լեզվի կիրառության, այսինքն՝ խոսքի օրինակներ են: Իսկ լեզուն այն վերացական մեխանիզմն է, որ թաքնված է գիտակցության խորքում: Դա մի պահպանողական մեխանիզմ է, առանց որի ցանկացած խախտում, որ մենք խոսելու ընթացքում թույլ ենք տալիս, այնքան արագ կփոխեր լեզվահաղորդակցությունը, որ լեզուն կդառնար անհասկանալի: Խոսքը փոփոխականն է, խոսքին հատուկ է էվոլյուցիան: Սակայն լեզուն նույնպես ժամանակի ընթացքում կարող է փոփոխվել, բայց ի տարբերություն խոսքի, այն իր զարգացման համար անհրաժեշտ աղբյուրներ չի բովանդակում: Լեզվի զարգացումը կախված է խոսքից. «Խոսքի երևույթներից է կախված լեզվի

Էվոյուցիան»: Մոսյուրը լեզուն և խոսքը համեմատում է սիմֆոնիայի նոտաների և դրանց կատարման հետ: Նա նշում է, որ լեզուն խոսքից բաժանելով՝ դրանով իսկ մենք բաժանում ենք 1)հասարակականը անհատականից, 2)գլխավորը երկրորդականից և քիչ թե շատ պատահականից:

Լեզուն իր հերթին օժտված է **համաժամանակությամբ (սինխրոնիա) և տարաժամանակությամբ (դիսխրոնիա)**: Համաժամանակությունը լեզվի վիճակը բնութագրում է ներկայում, իսկ տարաժամանակությունը դեպի անցյալը ուղղված հայացք է: Լեզվի կրողը սովորաբար գործ ունի միայն համաժամանակության հետ, իսկ տարաժամանակությունն առաջին հերթին հետաքրքրում է մասնագետներին: Մինչև XIX դարը լեզվաբանությունը լեզվի ուսումնասիրությունն իրականացնում էր տարաժամանակային կտրվածքով, և Մոսյուրն առաջինն էր, որ առաջարկեց լեզուն ուսումնասիրել նաև համաժամանակյա կտրվածքով՝ ստեղծելով նոր՝ համաժամանակյա լեզվաբանություն: Ըստ նրա, «պատահում է, որ համեմատաբար երկար ժամանակահատածի ընթացքում լեզուն համարյա չի փոխվում, իսկ հետո մի քանի տարվա ընթացքում նշանակալի փոփոխություններ է կրում: Միննույն ժամանակահատվածում գոյություն ունեցող լեզուներից մեկը կարող է շատ զարգանալ, իսկ մյուսը՝ համարյա չփոխվել: Երկրորդ դեպքում ուսումնասիրությունը կլինի համաժամանակյա, իսկ առաջին դեպքում անհրաժեշտ կլինի տարաժամանակյա մոտեցում:» Նա համա-

Ժամանակությունն ու տարածամանակությունը համեմատում է բույսի լայնակի և երկարությամբ արված կտրվածքների հետ, որտեղ երկայնակի հատվածը ցույց է տալիս բույսը կազմող մանրաթելերը, իսկ լայնակի կտրվածքը՝ դրանց խմբավորումը առանձին հարթության վրա: Դրանով նա ցույց է տալիս, որ համաժամանակյա լեզվաբանության խնդիրը լեզվի կառուցվածքային տարրերի և դրանց միաժամանակյա հարաբերությունների բացահայտումն է, իսկ տարածամանակյա լեզվաբանությունն ուսումնասիրում է միմյանց հաջորդաբար փոխարինող տարրերի միջև գոյություն ունեցող հարաբերությունները:

Սուպուրի ամբողջական տեսակետը կարելի է արտահայտել հետևյալ սխեմայով.



Այսպիսով, խոսքից, տարածամանակությունից վերանալու շնորհիվ, այսինքն՝ շնորհիվ նրա, որ լեզվի տարրերը սկսեցին դիտվել որպես նշաններ, հնարավոր դարձավ լեզվի՝ որպես կառուցվածքի մասին կառուցվածքաբանական մոտեցումը: Այդ է պատճառը, որ լեզվականության քառսից առանձնացած լեզուն արդեն դարձել է «հասկացություն արտահայտող նշանների համակարգ, և հետևաբար, այն կարելի է համեմատել գրի,

խուլ-համբերի այբուբենի, սիմվոլիկ ծեսերի, ռազմական ազդանշանների հետ և այլն»(Մոսյուր):

Ըստ XX դարի անվանի լեզվաբան Էմիլ Բենվենիստի, լեզուն իրագործում է նշանագիտական մոդելավորում, «քանի որ լեզվի բնույթը, նրա ներկայացնելիությունը, դինամիզմը, կոլեկտիվի կյանքում ունեցած դերը այն դարձնում են մի տեսակ համընդհանուր նշանագիտական մատրիցա, այնպիսի մոդելավորող կառուցվածքով, որ մնացած կառուցվածքները փոխառնում են դրա կառուցվածքի և գործառման հիմնական հատկությունները»: Հենց լեզվում է առաջանում նշանային գործառույթի հասկացությունը և միայն լեզուն է դա օրինակելիորեն մարմնավորում: Այստեղից բխում է լեզվի՝ մյուս համակարգերին նշանային հատկություններ հաղորդելու հատկությունը, որի շնորհիվ դրանք դառնում են նշանակություն հաղորդող համակարգեր:

Բենվենիստը բացահայտել է նշանագիտական համակարգերի փոխհարաբերությունների երեք տիպ.

1) Համակարգը կարող է ծնել այլ համակարգ: Դա կարող է տեղի ունենալ երկու միատեսակ համակարգերում, որոնցից մեկը կառուցվում է մյուսի հիման վրա և ինչ-որ մասնավոր կամ յուրահատուկ գործառույթ է իրագործում: Նման համակարգերը սեփական կառուցվածք չունեն և երկրորդական են այն համակարգերի նկատմամբ, որոնց կառուցվածքի հիման վրա իրենք ստեղծվում են: Օր., սովորական լեզուն ծնում է տրամաբանական-մաթեմատիկական ձևայնացված լեզուն, սովորական այբուբենը՝ Բրայլի այբուբենը և այլն: Դրանցից առա-

ջինները հիմնականն են, իսկ երկրորդները երկրորդական են առաջինների նկատմամբ:

2) Հարաբերությունների երկրորդ տիպը հոմոլոգիայի հարաբերությունն է, որը հարաբերակցություն է հաստատում երկու նշանագիտական համակարգերի մասերի միջև: Ի տարբերություն նախորդի այս հարաբերությունը ոչ թե հավաստվում է, այլ ներմուծվում է այն կապերի հիման վրա, որոնք կարող են հայտնաբերվել կամ հաստատվել երկու տարբեր համակարգերի միջև: Հոմոլոգիկ համապատասխանությունը կարող է հաստատվել գիտակցաբար կամ ինտուիտիվ, սուբստանցիալ կամ կառուցվածքային, տրամաբանական կամ բանաստեղծական ձևերով: Օր., հոտերը, գույները և հնչյունները կարող են համապատասխանել միմյանց՝ աշխարհի պատկերը արտացոլելով պատկերների համակարգի միջոցով և ստեղծելով բանաստեղծական աշխարհ:

3) Նշանագիտական համակարգերի միջև փոխհարաբերությունների երրորդ տիպը մեկնաբանողական հարաբերությունն է, որի դեպքում մեկնաբանող համակարգի միջոցով մեկնաբանվում է մեկնաբանվող համակարգը: Հասարակության մեջ ընդունված նշանները կարող են լիովին մեկնաբանվել լեզվի նշանների միջոցով: Բայց հակառակը հնարավոր չէ:

***Իսկ ինչպիսի՞ն են վերբալ համակարգերը և ինչպե՞ս են առաջացել:*** Վերբալ համակարգերը նշանների ճյուղավորված, հիերարխիկ բազմաշերտ կառուցվածքներ են, որոնց հիմնարար միավորները բառերն են: Դրանք

միավորվում են բառակապակցությունների, նախադասությունների, ասույթների մեջ: Դրանցից կազմվում են տեքստերը: Բառերը որպես լեզվական նշաններ օժտված են իմաստով: Իմաստով օժտված ամենավոքը լեզվական միավորները կոչվում են **մոնեմաներ** (տերմինը պատկանում է Ա.Մարտինեին), իսկ իմաստ չունեցող միավորները՝ **ֆոնեմաներ**: Մոնեմաները ավելի փոքր իմաստային միավորների չեն բաժանվում, բայց կարելի է բաժանել ֆոնեմաների, որոնք թեև որևէ իմաստի կրող չեն, բայց շատ դեպքերում դրանք համարվում են լեզվական նշանների տարբերակիչ միջոցները և այն «նյութն» են, որոնցից կազմվում են մոնեմաները: Լեզվի զարգացումը պատմականորեն ընթացել է ֆոնեմաներից դեպի մոնեմաների առաջացումը: Կարելի է գուգահեռ անցկացնել երեխաների լեզվի զարգացման հետ: Երեխան էլ սկզբում արտաբերում է իմաստից զուրկ հնչյունային միավորներ՝ մա, բա, տա և այլն: Մոնեմաներն առաջացել են ֆոնեմաներից, երբ նախնադարյան մարդն ի վիճակի է եղել միմյանցից զանազանել տարբեր պրակտիկ իրավիճակները, որոնք սկզբում բերել են ֆոնեմաների բարդացմանը դրանք կրկնելու միջոցով՝ մա-մա, բա-բա և այլն, ապա արդեն մոնեմաների առաջացմանը: Մասնագետները հակված են կարծելու, որ սկզբում առանձնացվել է գործողության օբյեկտը, ինչը երեխայի մոտ արտահայտվում է բառապաշարում տեղ գտած գոյականների ցուցանիշով: Այնուհետև, երբ մարդը պրակտիկ իրավիճակում սկսել է տարբերակել գործողությունը, տեղի է ունեցել անցում դեպի



ամբողջական ասույթի ձևավորումը: Այդպիսով առաջացել են ազգային տարբեր լեզուները, որոնք բնական լեզուներ են: Իհարկե, «բնական» չի նշանակում, որ դա բնության երևույթ է, այլ այն, որ դա առաջացել է բնականոն ճանապարհով, ի տարբերություն արհեստական լեզուների, որոնք ստեղծվում են հատուկ նպատակով և կոնվենցիոնալ բնույթ ունեն:

***Իսկ ինչպե՞ս դասակարգել նշանային համակարգերը և ի՞նչ փոխհարաբերություն գոյություն ունի դրանց միջև:***

Որպես նշանային համակարգերի դասակարգման հիմք կարող է ընդունվել դրանց կառուցվածքը՝ կախված դրանցում օգտագործվող նշանների տիպից: Դասակարգումը կարող է կատարվել նաև ըստ նշանային համակարգի գործառույթների: Մշակութաբանական տեսակետից կարելի է առանձնացնել մշակույթի հետևյալ տիպերը և դրանց համապատասխան նշանային համակարգերը. 1.բանավորը, 2.գրառման համակարգերը, 3.էլեկտրոնայինը:

1. Բանավոր նշանային համակարգերը համապատասխանում են մինչգրային ժամանակաշրջանին, երբ դիցաբանությունը, առասպելներն ու լեգենդները սերնդից սերունդ փոխանցվում էին բանավոր: Դրանք լի էին սիմվոլներով, որոնք կարիք ունեին հասկացվելու և մեկնաբանվելու:

2. Գրառման համակարգերը վկայում են մշակույթի համեմատաբար բարձր մակարդակի մասին: Դրանք առաջանում են խոսակցական լեզվի, երաժշտության, պարի և այլ նշանային համակարգերի հիման վրա և

երկրորդական են նրանց նկատմամբ: Դրանք են գիրը՝ բնական լեզվի գրառման համակարգը, նոտաների գրառումը և այլն: Գրառման շնորհիվ վերանում են հաղորդակցման տարածաժամանակային սահմանները: Առանց դրանց անհնար կլիներ գիտության և տեխնիկայի զարգացումը, քանի որ գիրը հնարավորություն է տալիս հարստացնել և կատարելագործել մտքի արտահայտման միջոցները: Գրառման համակարգի զարգացման կարևոր ուղղություններից մեկը արհեստական, ձևայնացված լեզուների ստեղծումն է:

3. Էլեկտրոնային նշանային համակարգերը ամբողջովին հիմնված են արհեստական՝ ծրագրավորման լեզուների վրա և պատահական չէ, որ նշանագիտության հիմնական ուղղություններից մեկն այժմ դրանց ուսումնասիրությունն է: Դրանք փոխել են ժամանակակից մշակութաբանական ողջ իրողությունը: Դրանց օգնությամբ համակարգչի մեջ պահվում են ամբողջ գրադարաններ, առաջացել են հաղորդակցության նոր ձևեր, որոնք իրականացնում են նույնիսկ պատմական իրադարձությունների հրահրումն ու դեկավարումը տարածության վրա:

### Գրականություն

Ֆ.դր Սոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Եր., 2008, էջ 136-148, 152-158:

Барт Р. Основы семиологии. В кн.: “Структурализм: «за» и «против»”. М. 1975 сс.114-127.

Бенвенист Э. Общая лингвистика, М., 1974, сс. 85-87.

## ԹԵՄԱ 5. Նշանագիտության կառուցվածքը

### §1. Գաղափար սեմիոզիսի մասին

*Մեմիոզիսի* հասկացությունը նշանագիտության կենտրոնական հասկացություններից է: Ամերիկյան հայտնի փիլիսոփա, նշանագետ Չարլզ *Մորիսը* սեմիոզիս է անվանում այն գործընթացը, «որում ինչ-որ բան գործառվում է որպես նշան»: Նա առանձնացնում է նաև սեմիոզիսի երեք չափումները, որոնք հաճախ դիտվում են որպես նշանագիտական վերլուծության երեք տարբեր ոլորտներ. 1) *սեմանտիկան* բնութագրում է նշանի հարաբերությունը օբյեկտին, 2) *սինտակտիկան* ընդգրկում է նշանների հարաբերությունը միմյանց նկատմամբ, 3) *պրագմատիկան* ուսումնասիրում է նշանների և դրանք կիրառողների (ինտերպրետատորի) միջև հարաբերությունը: Ընդ որում «պրագմատիկա» տերմինը ներմուծվել է նրա կողմից: Մորիսն ուշադրություն դարձրեց նաև այն հանգամանքին, որ ժամանակակից նշանագիտության այդ երեք բաժինները ճշգրտորեն համապատասխանում են միջնադարյան տրիվիումի գաղափարին.

Տրիվիում	Նշանագիտություն	Ի՞նչ է ուսումնասիրվում
քերականություն	սինտակտիկա	հարաբերությունը նշանի և նշանի միջև
Դիալեկտիկա (տրամաբանությ- յուն)	սեմանտիկա	նշանի հարաբերությունը իմաստին և նշանակությանը
հոետորություն	պրագմատիկա	նշանի և նրա օգտագործողի՝ մարդու հարաբերությունը

Մեմիոգիսի հասկացությունը կարևոր նշանակություն ունի նաև Չարլզ *Պիրսի* տեսության մեջ: Ըստ նրա, սեմիոգիսը ինտերպրետացիայի այն դինամիկ գործընթացն է, որն «օբյեկտ-նշան-ինտերպրետանտա» եռանդամի միջոցով արտահայտում է նշանի հարաբերությունն արտաքին աշխարհի նկատմամբ: Նշանը որպես նշան չի կարող գործառվել, քանի դեռ որպես այդպիսին չի իմաստավորվել: Այլ կերպ ասած՝ նշան դառնալու համար նշանները պետք է ինտերպրետացվեն: Իսկ ինտերպրետանտան նշան/օբյեկտ հարաբերության թարգմանությունն է, մեկնաբանությունը, կոնցեպտուալիզացիան է ապագա նշանում: Օր. մարդու որոշակի վերաբերմունքը ընկալվող նշանի նկատմամբ, բառի բացատրությունը այլ բառերի օգնությամբ և այլն:

Յուրաքանչյուր նշան ի գորու է ինտերպրետանտա առաջացնել և այդ գործընթացը փաստորեն անվերջ է: Մեմփոզիսը նշանի կողմից իր ինտերպրետանտան առաջացնելու գործընթացն է, որն ըստ նրա, նույնպես անսահմանափակ է:

## § 2. Մինտակտիկա

Մինտակտիկան նշանագիտության այն բաժինն է, որն ուսումնասիրում է նշանային համակարգերի կառուցվածքը նշանների համակցման՝ սինտակսիսի (քերականության) տեսանկյունից: Դա տեղի է ունենում վերացարկման միջոցով՝ վերացարկելով նշանների իմաստային բովանդակությունից: Բայց *արդյո՞ք հնարավոր է մաքուր սինտակսիսը*: Պարզվում է, որ դա հնարավոր է միայն ձևայնացված լեզուներում, իսկ բնական լեզվում՝ ոչ:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ սինտակտիկական համակարգի հետ գործ ունենալիս մարդը հայտնվում է նշանների յուրահատուկ, պարփակված աշխարհում, որը մատերիական աշխարհի իրական երևույթների հետ կապված չէ: Մինչդեռ, իրականում նշանի կապը առարկայի հետ պահպանվում է, թեև ձեռք է բերում յուրահատուկ բնույթ: Մինտակտիկական համակարգերը վերջին հաշվով բովանդակային են, այսինքն՝ դրանցում պարունակվում են նշանակված առարկաների մասին գիտելիքներ, բայց ոչ թե ակնհայտ, այլ՝ զաղտնի ձևով: Պատճառն այն է, որ նշանների գործառման կանոնները սինտակտիկական

համակարգերում կամայական չեն, այլ արտացոլում են իրականությանը հատուկ հարաբերություններ:

Մինտակտիկական համակարգերի բովանդակային բնույթը ցույց տալու համար դիմենք ակադեմիկոս Շչերբայի հայտնի օրինակին՝ «Глокая куздра штеко бодланула бокра и кудрячит бокренка» արտահայտությանը: Առաջին հայացքից նշանային այս կառույցը արտուրդ է, քանի որ նրա կազմի մեջ մտնող յուրաքանչյուր նշան/բառ առանձին վերցրած ոչ մի առարկա չի նշանակում և անիմաստ է: Սակայն, կարելի է նկատել, որ տվյալ «արտահայտությունը» կառուցված է միանգամայն որոշակի կանոններով. դրանք ռուսերենի քերականական կանոններն են: Եվ քանի որ վերջիններս կամայական չեն, դա թույլ է տալիս տվյալ արտահայտությանը որոշակի բովանդակություն հաղորդել: Մասնավորապես, քերականության իմացությունը հնարավոր է դարձնում այդ կառույցի առանձին տարրերը պատկերացնել որպես խոսքի մասեր՝ գոյականներ(куздра, бокра, бокренка), բայեր (бодланула, кудрячит), ածական (глокая), մակբայ (штеко): Այս նախադասության մեջ կարելի է առանձնացնել նաև նախադասության անդամները (ենթական, ստորոգյալը և այլն), դրա իմաստը հասկանալ որպես «бокра»-ի և «бокренка»-ի նկատմամբ ինչ-որ գործողության արտահայտություն: Կարելի է նույնիսկ պարզել, արդյո՞ք «бокра»-ն և «бокренок»-ը շնչավոր թե անշունչ առարկաներ են՝ նկատի ունենալով դրանց տարբերությունը ռուսերենի հայցական (винительный) հոլովում (повалить кого?-теленка, но повалить что?-бочонок): Կարելի է ասել, որ

գործողության օբյեկտները՝ «күздра»-ն «бокренок»-ը շնչավոր էակներ են, ընդ որում դրանցից մեկը մեծ է, իսկ մյուսը՝ փոքր:

Ինչպես արդեն նշվել է, սինտակտիկական հարաբերությունը նշան-նշան հարաբերությունն է տվյալ նշանային համակարգի սահմաններում: Ներհամակարգային սինտակտիկական հարաբերությունները նշանների միջև լինում են երկու տիպի՝ **սինտագմատիկական և պարադիգմատիկական**: Այդ մասին Ֆ.դը Սոսյուրը գրում է. «Մի կողմից բառերը և խոսքերը միավորվելով՝ միմյանց հետ մտնում են գծային բնույթի վրա հիմնված հարաբերությունների մեջ՝ բացառելով երկու տարրերի միաժամանակյա արտաբերումը... Այդ տարրերը խոսքի ընթացքում մեկը մյուսի ետևից շարվում են: Այդպիսի գուգորդումները, որոնք ունեն տևողություն, կարելի է անվանել **սինտագմաներ**: Մյուս կողմից՝ խոսքի գործընթացից դուրս ինչ-որ ընդհանուր բան ունեցող բառերը հիշողության մեջ այնպես են գուգորդվում, որ դրանցից կազմվում են լիովին տարբեր հարաբերություններ բացահայտող խմբեր, որոնք տևողության վրա չեն հիմնվում, այլ տեղայնացվում են ուղեղում և պատկանում են անհատի հիշողության մեջ պահվող այն գանձին, որը լեզուն է: Այդ հարաբերությունները մենք կանվանենք գուգորդական (ասոցիատիվ) հարաբերություններ»: Հետագայում Սոսյուրի պսիխոլոգիզմից ազատագրվելով՝ լեզվաբանները «ասոցիատիվ» տերմինը փոխարինեցին **պարադիգմատիկականով**:


Այսպիսով, սինտագման նշանների այն համադրումն է, որը ենթադրում է տևողություն և անդարձելիություն և կազմում է իմաստավորված ամբողջություն. երկու հնչյուն չեն կարող միաժամանակ արտաբերվել: Յուրաքանչյուր տարրի արժեքը առաջանում է որպես օպոզիցիա նախորդող և հաջորդող տարրերի նկատմամբ: Հետևաբար, սինտագմատիկական վերլուծությունը կլինի տարրերը միավորող շղթայի մասնատումը: Իսկ պարադիգմատիկական վերլուծությունը հանգում է դրանց դասակարգմանը: Քանի որ նշանային այս հարաբերությունները լեզվից բացի գոյություն ունեն նաև այլ նշանային համակարգերում, Ռ.Բարտը տալիս է հետևյալ աղյուսակը.

	համակարգ	սինտագմա
հագուստ	հագուստի մասերի նդետալների ամբողջությունը, որոնք հնարավոր չէ միաժամանակ հագնել մարմնի միևնույն մասի վրա. այդ դետալների ձևափոխումը հանգեցնում է հագուստի «իմաստի» փոփոխությանը (շլապա/չեպչիկ/չալմա)	միևնույն հանդերձի սահմաններում տարբեր տարրերի համադրումը. (վերնաշապիկ-շալվար-բաճկոն)
սնունդ	միասեռ և ոչ նման ճաշատեսակների ամբողջությունը, որոնցից մեկի կամ մյուսի փոփոխությունը փոխում է իմաստը. այդպիսին է I և II	ուտելու ընթացքում ճաշատեսակների մատուցման իրական հերթականությունը



	ճաշատեսակների կամ աղանդերի փոփոխությունը	
Կահավորանք	միննույն իրի «ոճական» փոփոխությունը (օր. մահճակալի)	տարբեր իրերի համադրումը միննույն տարածության սահմաններում. (մահճակալ- պահարան-սեղան)
Ճարտարապետություն	շենքի որևէ տարրի ոճական տարբերակները. Տարբեր տանիքներ, մուտքեր, պատշգամբներ	դետալների համադրումը միմյանց հետ՝ ճարտարապետական անսամբլի սահմաններում

Մինտազմատիկական և պարադիգմատիկական կառուցվածքների տարբերությունը հիմնարար նշանակություն ունի կառուցվածքաբանական և նշանագիտական վերլուծության համար: Այս երկու չափումները հաճախ ներկայացվում են առանցքների ձևով, որտեղ ուղղահայացը պարադիգմատիկականն է, իսկ հորիզոնականը՝ սինտազմատիկականը:



Ինչպես պարզ երևում է, սինտագմաները առաջանում են պարադիգմաների ընտրության միջոցով, քանի որ պարադիգման որոշակի կատեգորիայի անդամներ հանդիսացող և զուգորդվող նշանների բազմությունն է, որոնցում չնայած նշանների միևնույն կատեգորիային պատկանելությանը՝ մի նշանը զգալիորեն տարբերվում է մյուսից: Օր., լեզվում նախադասությունը բառերի սինտագմա է: Պարագրաֆները և գլուխները ևս սինտագմաներ են, իսկ բառարանը պարադիգմա է: Գոյություն ունեն քերականական պարադիգմաներ, օր.՝ գոյականները կամ բայերը: Ռեստորանային մենյուն ներկայացնում է երկուսն էլ՝ և սինտագմատիկան, և պարադիգմատիկան: Ճաշացանկում ճաշատեսակների թվարկումը պարադիգմատիկան է, իսկ սեղանի վրա մատուցվող դրանց հաջորդականությունը՝ սինտագմատիկան:

### **§ 3. Մեմանտիկա**

Մեմանտիկան նշանագիտության այն բաժինն է, որը ուսումնասիրում է լեզվական արտահայտության հարաբերությունը իրականության օբյեկտների և դրանց հասկացությունների նկատմամբ: Թեև սեմանտիկական շատ հիմնահարցեր քննարկվել են դեռևս անտիկ մտածողների կողմից, բայց սեմանտիկան որպես ուսումնասիրության առանձին բնագավառ ձևավորվեց Չ.Պիրսի, Ֆ.Սոսյուրի և Չ.Մորիսի աշխատանքներում: Առավել լավ ուսումնասիրված է տրամաբանական

սեմանտիկան, որը նկարագրում է արհեստական լեզուների արտահայտությունների և դրանց ինտերպրետացիաների միջև եղած հարաբերությունները: Այդ հետազոտությունների հիման վրա ձևայնացված լեզուների վերաբերյալ արդյունքները այժմ հաջողությամբ կիրառվում են նաև բնական լեզուների սեմանտիկական հատկությունները բացահայտելու համար: Լեզվաբանության մեջ նշանի սեմանտիկական նշանակությանը համապատասխանում է դրա լեքսիկական նշանակությունը:

Սեմանտիկայի կենտրոնական հասկացությունները նշանակության և իմաստի հասկացություններն են: Առօրյա լեզվում դրանք հնչում են որպես հոմանիշներ, իսկ էմպիրիկ մեկնաբանություններում բացատրվում են մեկը մյուսի միջոցով: ***Բսկ ո՞րոնք են լեզվական արտահայտության նշանակության և իմաստի տարբերությունները:***

**Ա.** Իմաստի հասկացությանը սովորաբար դիմում են բառերի և արտահայտությունների բովանդակային մեկնաբանության դեպքում, իսկ նշանակություն ասելով Ֆրեգեից եկող ավանդույթի համաձայն՝ հասկանում են դրա դենոտատը, այսինքն այն առարկան, որը նշանակվում է այդ բառով կամ արտահայտությամբ: Օր., երբ ասում ենք՝ «Ես դրանում չեմ տեսնում ոչ իմաստ, ոչ նշանակություն», դրանով իսկ անջատում ենք նշանակությունը այն բովանդակային պլանից, որը բնորոշ է իմաստի հասկացությանը, մինչդեռ նշանակությունը ավելի մոտ է մի ավելի լայն հասկացության՝ արժեքի

հասկացությանը, քանի որ միշտ պայմանական է՝ կախված սուբյեկտիվ արժևորող սկզբից: Այդ պատճառով, նշանակությունն առաջանում է արտահայտության պլանում, իսկ իմաստը՝ բովանդակության: Հետևաբար, նշանակությունը մակերեսայինն է, իսկ իմաստը՝ խորքայինը: ***Բսկ կարո՞ղ է լեզվական նշանն ունենալ իմաստ, բայց չունենալ նշանակություն:*** Օր., այն դեպքը, երբ աշակերտը սովորում է բայի խոնարհումը. նա թեև հասկանում է խոնարհվող բայն արտահայտող բառի իմաստը, բայց տվյալ դեպքում դա նրա համար նշանակություն չունի:

***Բ.*** Թե իմաստը, թե նշանակությունը ուղղված են սուբյեկտին, սակայն տարբեր հարթությունների վրա և տարբեր կերպով: Իմաստը ձևավորվում է ***սուբյեկտի մեջ***, որոշակիանում է նրա կողմից, իսկ նշանակությունը գոյություն ունի ***սուբյեկտի համար***: Այդ պատճառով, իմաստը սուբյեկտիվ է և փոփոխական, իսկ նշանակությունը նշանի կայուն հատկությունն է:

***Գ.*** Իմանալ, թե որն է բառի նշանակությունը, նշանակում է պարզել, թե ինչպիսին է նրա մասնակցությունը իմաստի ձևավորման գործում: Բառը կարևոր է նրանով, որ այն ***իմաստի արտահայտման*** արժեքային համակարգում հանդես է գալիս որպես տարր, որը միջնորդավորում է նշանի ու առարկայի (դենոտատի) կապը: Հետևաբար, ***իմաստը միջնորդավորող է, իսկ նշանակությունը՝ արտահայտող:***

Իմաստի և նշանակության տարբերության շնորհիվ այնպիսի նույնաբանությունները, որոնք տրամաբանական

նշանակության տեսակետից նույնական են, իմաստային տարբերության պատճառով կարող են ոչ նույնաբանական լինել: Օր. «Թուրքը թուրք է» արտահայտությունը տրամաբանական տեսակետից տավտոլոգիա է, բայց լեզվաբանական տեսակետից միևնույն նշանի երկու տարբեր իմաստների պատճառով միանգամայն հասկանալի նշանակություն է ձեռք բերում, քանի որ բառն ինքնըստինքյան նշանակություն չունի, դա պարզապես լսողական աղմուկ է, բայց լեզվում իր կիրառության շնորհիվ այն ձեռք է բերում նշանակություն: Սովորելով բառի նշանակությունը՝ մենք իմանում ենք այն յուրահատուկ պայմանավորվածությունը, թե որ աղմուկները, կոպիտ ասած, որ իրերին են վերաբերում: Այսպիսով, լեզվի բառերն օգտագործվելով խոսքում՝ ձեռք են բերում վերաբերություն՝ *ռեֆերենցիա* աշխարհի այն օբյեկտների նկատմամբ, որոնց վերաբերյալ կիրառվում է տվյալ բառը: Այլ կերպ ասած, դրանք օժտվում են դեպի օբյեկտները «ուղղորդելու» հատկությամբ: Աշխարհի այն օբյեկտը, որին վերաբերում է բառը, կոչվում է *ռեֆերենս*: Տրամաբանական սեմանտիկայում այդ հասկացությունը նշանակվում է *դենոտատ* բառով:

Չյորչի կարծիքով, դենոտատն ամենալայն իմաստով այն իրն է, որ կարող է անվանվել և նշանակվել որոշակի անունով: Այլ խոսքով, դենոտատն անվան առարկան է: Ըստ Ֆրեգեի անունները կարող են ունենալ տարբեր իմաստներ, բայց վերաբերել միևնույն դենոտատին: Օր., Վեներա մոլորակը անվանվում է նաև Առավոտյան աստղ և Երեկոյան աստղ, որոնք իմաստային տեսակետից տարբեր

են, բայց վերաբերում են միևնույն դեմոտատին, որը Վենեթան է: Չորսը դեմոտատը համարում է անվան գործառույթը և կարծում է, որ եթե տրված է իմաստը, ապա դրանով սահմանվում է դեմոտատի գոյությունը: Մակայն ոչ միշտ է այդպես, քանի որ հնարավոր է այնպիսի դեպք, երբ այս կամ այն արտահայտությունը իմաստ ունի, իսկ դեմոտատ՝ ոչ: Տրամաբանական գրականության մեջ այդ կապակցությամբ բերվում է հետևյալ օրինակը. «Ֆրանսիայի թագավոր» բառերով արտահայտվող հասկացությունը անմիտ չէ, ունի իմաստ, որովհետև միշտ կարելի է ասել, թե արդյո՞ք տվյալ օբյեկտը Ֆրանսիայի թագավոր հանդիսանում է, թե ոչ: Եթե ենթադրում ենք, որ «Ֆրանսիայի թագավոր»-ը նշանակում է որոշ տիպի օբյեկտ, ապա ռեալ իրականության հետ այստեղ ոչ մի հակասություն չկա: Բայց հենց որ ենթադրենք, որ տվյալ օբյեկտը ներկայումս հանդիսանում է Ֆրանսիայի թագավոր, արդեն հակասություն կստացվի: Հետևաբար, «Ֆրանսիայի թագավոր» արտահայտությունն իմաստ ունի, բայց ներկայումս դեմոտատ չունի:

***Արդյո՞ք կարելի է նույնացնել նշանի նշանակությունը դրանով նշանակվող առարկայի հետ:*** Այս տեսակետի ներկայացուցիչները պնդում են, որ՝ ասենք, «Լոնդոն» բառի նշանակությունը ինքը՝ Լոնդոնն է, իսկ «փիղ» բառի նշանակությունը՝ ինքը՝ փիղը: Մրան կարելի է առարկել, քանի որ եթե «այս մարդը» արտահայտության նշանակությունն ինքը՝ մարդն է, ապա կարող ենք պնդել, որ տյալ արտահայտության նշանակությունը հիվանդացել է գրիպով, ինչն արտուրդ է: Կամ այլ առարկություն. եթե

մենք արտադրում ենք, գնում ենք, տեղափոխում ենք, օգտագործում ենք ինչ-որ առարկաներ, մենք արտադրում, գնում, տեղափոխում, օգտագործում ենք ոչ թե այդ բառերին համապատասխան նշանակությունները, այլ հենց իրենց՝ առարկաները:

Ռ.Բարտի կարծիքով, նշանի նշանակությունը կարող է հասկացվել որպես գործընթաց, որպես մի գործողություն, որը միավորում է նշանակիչը և նշանակյալը, և որի արդյունքում ի հայտ է գալիս նշանը:

***Արդյո՞ք կարող է լինել նշան, որ չունենա նշանակյալ և բաղկացած լինի միայն նշանակիչից:***

Ժամանակակից պոստմոդեռնիստական փիլիսոփայության մեջ լայնորեն շրջանառվում է սիմուլյակրի հասկացությունը: ***Միմուլյակրը***, ըստ էության, նշանն է, որը զուրկ է նշանակյալից: Այդպիսի նշանը, սակայն, չի կարող ուղղորդել դեպի իրականության այն առարկան կամ երևույթը, որը պետք է արտահայտվի նշանի միջոցով: Հետևաբար, նա կորցնում է իր ռեֆերենտն իրականության մեջ և վերածվում է սիմուլյակրի: Ըստ Ժ.Դեյոզի, սիմուլյակրը խզելով կապը նշանակիչի և նշանակյալի միջև «հաստատում է նշանակիչի իշխանությունը, որն այլևս չունի նշանակյալ և ընդունակ է ինքնուրույն ստեղծելու ու կյանքի կոչելու սեփական նշանակյալը»: Այսպիսով, պոստմոդեռնիզմի ներկայացուցիչները սիմուլյակրի հասկացությանը հանգեցին նշանի ապակառուցման շնորհիվ: Ավելին, նրանք նշանի հասկացությունը փոխարինեցին սիմուլյակրի հասկացությամբ՝ սիմուլյակրը դիտելով որպես նշանի զարգացման վերջնական փուլ:

Ժ.Բողոքիարը նշանի զարգացման գործընթացում առանձնացնում է չորս փուլ. ա/ հիմնարար իրականության արտացոլումը, բ/ հիմնարար իրականության աղավաղումը, գ/ իրականության նենգափոխումը և իրականության անմիջական *բացակայությունը* թաքցնելը, դ/ իրականության հետ որևէ կապի կորուստը, անցումը նշանի նշանակության ոլորտից սիմուլյացիայի ոլորտը, որը հենց սիմուլյակրի ստեղծումն է, նշանի վերածումն է սիմուլյակրի: Ժամանակակից իրողություններից սիմուլյակր կարող են համարվել վիրտուալ իրականությունը, բրենդը, գովազդը և այլն:

Նշանի և նրա ռեֆերենտի միջև գոյություն ունեցող հարաբերությունները նկարագրելու համար նշանագետները տարանջատում են ***դենոտացիան և կոնոտացիան***: Դենոտացիան կիրառվում է որպես նշանի սահմանված կամ բառացի նշանակություն, իսկ կոնոտացիան ցույց է տալիս նրա սոցիոմշակութային և անհատական ասոցիացիաները (զաղափարական, էմոցիոնալ և այլն): Ռ.Բարտը դենոտացիան և կոնոտացիան առանձնացնում է որպես նշանակության տարբեր մակարդակներ: Առաջինը նա համարում է դենոտացիայի մակարդակը, որտեղ նշանը բաղկացած է նշանակիչից և նշանակյալից: Կոնոտացիան արդեն երկրորդ մակարդակն է, որում առաջին մակարդակի նշանն օգտագործվում է որպես նշանակիչ և նրան վերագրվում է արդեն կոնոտատիվ նշանակյալը:

Երմալենկին առաջարկում է դենոտացիայի մակարդակը նշանակել ERC, որտեղ E-ն արտահայտման



պլանն է, C-ն՝ բովանդակության պլանը, իսկ R-ը նրանց միջև գոյություն ունեցող հարաբերությունը: Եթե ենթադրենք, որ ERC համակարգը հանդես է գալիս որպես երկրորդական համակարգի պարզ տարր, որը էքստենսիվ է առաջինի նկատմամբ, ապա կստանանք երկու համակարգ, որոնք կարծես թե մի կողմից դրված են մեկը մյուսի մեջ, իսկ մյուս կողմից՝ առանձնացված են: Այդ առանձնացումը կարող է իրագործվել երկու տարբեր եղանակով, որոնցից մեկի դեպքում կստանանք կոննոտացիան, իսկ մյուսի դեպքում՝ մետալեզուն: Կոննոտատիվ մակարդակը կարելի է արտահայտել հետևյալ կերպ.



Ըստ Ռ.Բարտի, կոննոտատիվ համակարգը ներառում է նշանակիչը, նշանակյալը և նրանց միավորող գործըթացը՝ նշանակությունը: Կոննոտատիվ համակարգի նշանակիչները՝ կոննոտատորները նշաններ են դենոտատիվ համակարգում, որոնք նշանակիչների և նշանակյալների միասնություն են:

Իսկ մետալեզուն կարտահայտվի հետևյալ ձևով.



Կոննոտատիվ համակարգում երկրորդ համակարգի նշանակիչները կազմված են առաջինի նշաններից: Մետալեզվում ճիշտ հակառակն է. երկրորդ համակարգի նշանակյալներն են կազմված առաջինի նշաններից: Մետալեզվում որպես ուսումնասիրության առարկա

հանդես է գալիս օբյեկտ լեզուն: Հնարավոր է, որ մետալեզուն ինքը դիտարկվի որպես օբյեկտ-լեզու այլ մետալեզվի համար: Որպես մետալեզվի օրինակ կարող են հանդիսանալ գիտության լեզուները: Իսկ որպես դենոտացիայի և կոնոտացիայի օրինակ պրոֆ. Լ.Աբրահամյանը բերում է հետևյալը.

Դենոտացիա Նշան 1	Նշանակիչ 1 Նշանակյալ 1 «Կիկոս» անունը Կիկոս անունով մարդը	1
Կոնոտացիա Նշան 2	Նշանակիչ 2	Նշանակյալ 2 Կիկոս կերպարը

Նա դենոտացիան համարում է նշանակություն, իսկ կոնոտացիան՝ համանշանակություն:

Կոնոտացիաները բխեցվում են ոչ թե անմիջապես նշանից, այլ նրանից, թե հասարակությունը ինչպես է կիրառում և ինչ նշանակություն է հաղորդում նշանակիչին ու նշանակյալին: Քանի որ նշանն իրականացնում է զգայարանների կողմից ընկալվող մատերիական աշխարհից անցումը ինֆորմատիվին, ապա պահանջում է համապատասխան կողավորում:

Բրիտանական սոցիոլոգ Ստյուարտ Հոլլը գտնում է, որ դենոտացիա տերմինը լայն իմաստով նույնական է նշանի բառացի նշանակությանը, որովհետև բառացի նշանակությունն ընդունվում է համընդհանուր ձևով՝

առանց որևէ կողմ հիշատակելու, իսկ կոննոտացիան կիրառվում է ավելի կոնվենցիոնալ և փոփոխվող սառցիաստիվ նշանակությունները ցույց տալու համար, որոնք օրինակից օրինակ փոփոխվում են և դրանով իսկ կախված են *կողմից*:

*Ի՞նչ է կողը և ի՞նչ նշանակություն ունի:* Կող են անվանվում այն կոնվենցիաները, որոնք պայմանավորում են նշանների պատկանելությունը համակարգի նշանակությանը: Դրանք դինամիկ բնույթ ունեն, քանի որ պատմական և սոցիոմշակութային պատկանելություններ են, որոնք ժամանակի ընթացքում փոփոխվում են: Օր., անցյալ դարի կեսերին սպիտակ լայնեզր գլխարկը կողավորվում էր որպես կովբոյի նշանակիչ, բայց այժմ այդ կոնվենցիան վերացել է: Հասարակության մեջ համարժեք վարքագիծ դրսևորելու համար անհրաժեշտ է իմանալ բազմաթիվ կողեր: Սոցիալական կողեր են համարվում.

ա. վերբալ լեզուն (հնչյունաբանական, շարահյուսական, լեքսիկական),

բ. ապրանքային կողերը(մոդան, հագուստը, ավտոմեքենան),

գ. մարմնական կողերը(արտաքինը, դեմքի արտահայտությունը, ժեստերը),

դ. կարգավորիչ կողերը (երթնեկության կանոնները, գործունեության մասնագիտական կողերը):

Ու.էկոն որպես կերպարների ստեղծման գործիքներ առաջարկել է տաս հիմնարար կողեր՝ ընկալման կողեր, փոխանցման կողեր, ճանաչման կողեր, երանգային կողեր, պատկերային կողեր, պատկերագիտական կողեր, ճաշակի

ու զգայականության կողեր, հոռետորական կողեր, ոճաբանական կողեր և անգիտակցականի կողեր:

Կողերի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ կողային հաղորդագրությունների դեպքում իմաստին դիմելու անհրաժեշտություն չի զգացվում, քանի որ տեղի է ունենում նշանի միայն արտաքին կողմի փոփոխություն, իսկ ներքին, իմաստային կողմը մնում է հաստատուն: Օր, վերոհիշյալ օրինակում իմաստային կողմը կովբոյի էությունն է, որն արտահայտվում էր սպիտակ լայնեզր գլխարկով որպես արտաքին կողմ և որն այժմ կարող է արտահայտվել նաև այլ կերպ:

Այսպիսով, անհրաժեշտ է հստակ սահմանազատել նշանը և կողը, թեև դրանց նույնացումը հաճախ հանդիպող սխալներից մեկն է: Նշաններն ունեն երկու պլան՝ արտահայտության պլանը և բովանդակության պլանը, իսկ կողերը բովանդակության պլան չունեն, դրանք «շինանյութ» են նշանների արտահայտման պլանի համար:

#### § 4. Պրագմատիկա

Պրագմատիկան բնութագրում է *նշանի* և դա օգտագործողի՝ *ադրեսատի* հարաբերությունը: Նշանի պրագմատիկ նշանակությունը կախված է նրանից, թե ադրեսատն ինչպես կմեկնաբանի նշանը: Ի տարբերություն Պիրսի նշանագիտությանը, Սոսյուրի նշանաբանական համակարգում պրագմատիկան բացակայում է: Պիրսն առաջինն էր, ով հանձինս մեկնաբանողի՝ նշանագիտական տեսության մեջ ներմուծեց մարդկային գործոնը: Ցանկացած նշան միշտ հասցեագրված է ինչ-որ

մեկին և նրա պրագմատիկ նշանակությունը ամենից առաջ բխում է ադրեսատի նախատրամադրվածությունից, արձագանքից:

Սակայն նշանի ամեն մեկնաբանությունն ներկայանում է տեքստի ձևով: Ուրեմն, ***ի՞նչ փոխհարաբերություն կա նշանի և տեքստի միջև:***

Անհասկանալի նշանի բացատրության համար միշտ բավականին ընդարձակ տեքստ է անհրաժեշտ, որովհետև երբ մենք սկսում ենք բացատրել նշանը, այդ բացատրությունն արդեն տեքստի ձև է ստանում: Ըստ Բարտի, տեքստը «աշխատում է» նշանակիչի ոլորտում, քանի որ ներկայացնում է այն, ինչ արտահայտում է նշանը: Դա նշանակում է, որ նշանի ու տեքստի միջև անջրպետ գոյություն չունի և հնարավոր չէ որոշել, թե որտեղ է ավարտվում նշանն ու սկսվում տեքստը: Յուրաքանչյուր նշան, այդ թվում նաև լեզվական նշանը, նրա նշանակության մեջ թաքնված ամփոփ տեքստ է, ճիշտ այնպես, ինչպես տրամաբանության մեջ հասկացությունն է համարվում դատողության ամփոփ ձևը:

Սակայն տեքստի գլոբալ իմաստը նրա նշանային տարրերի առարկայական բովանդակությունից չի գոյանում: Տեքստն ունի այն առանձնահատկությունը, որ նրա ամբողջական նշանակիչը չի կարելի փոխարինել այլ նշանակիչով, այսինքն՝ տեքստը վերարտադրել այլ բառերով, որովհետև դա արդեն կլինի ուրիշ տեքստ: Մա նշանակում է, որ տեքստի նշանակիչը և նշանակյալը կարծես թե միավորվում են միմյանց հետ: Ժամանակակից նշանաբանության պատկերացումների համաձայն՝ բառի,

անունի համար բնորոշ է դենտոացիան, իսկ տեքստի պրոբլեմը կոննոտացիայի պրոբլեմ է:

Ռ.Բարտի համար տեքստը հռետորական կատեգորիա է: Ինչպես նկատում է Արիստոտելը, այստեղ մենք մտահոգված ենք ոչ այնքան նրանով, թե ինչ ասենք, որքան նրանից, թե ինչպես ասենք և դա կախված է նրանից, թե ում ենք ասում:

Հռետորական վերլուծությունը տալիս է ցանկացած տեքստի հասկացման մեխանիզմը, քանի որ յուրաքանչյուր տեքստի կառուցում ենթադրում է երկխոսություն, որի նպատակն է ադրեսատին դարձնել հեղինակի համախոհը: Հռետորական վերլուծությունը պահանջում է վերհանել.

ա/ տեքստի ընդհանուր նպատակը. հեղինակն ուզում էր տեղեկություն<sup>ո</sup> տալ ադրեսատին, համոզե<sup>լ</sup> նրան, զվարճացնե<sup>լ</sup> ստիպել մտորելու<sup>ո</sup>...

բ/ տեքստի կոնկրետ նպատակը, որը ընդհանուր նպատակն է՝ գումարած հիմնական թեզիսը, որը կարող է լինել թեման, այսինքն՝ այն, ինչին այն նվիրված է:

գ/ ո՞ւմ համար կամ ի՞նչ լսարանի համար է նախատեսված տեքստը:

Կարևոր է նաև ձայնի ինտոնացիան, քանի որ «Ի՞նչ լեզվով ձեզ հետ խոսեմ» հարցը ոչ միշտ է նույնական այն հարցի հետ, թե՛ «Ի՞նչ լեզվով ձեզ դիմեմ»: Ըստ Ա.Ֆ.Լոսելվի, լեզվի ինտոնացիան վկայում է նրա անվերջ իմաստային արժեքայնության մասին, քանի որ միննույն նախադասությունը կարելի է այնքան տարբեր ինտոնացիաներով արտաբերել, որ դա ըստ իմաստի հաստատականից փոխվի նույնիսկ լրիվ հակառակին:

Մ.Մ.Բախտինի կարծիքով ցանկացած տեքստ կարող է դիտվել որպես երկխոսություն: Նույնիսկ այն դեպքում, երբ գործ ունենք մենախոսության հետ, ապա դա կարելի է դիտել որպես երկխոսություն՝ միայն թե ինքն իր հետ: Դրանով իսկ տեքստը դառնում է հաղորդակցության միջոց, իսկ հաղորդակցությունը դիտվում է որպես նշաններով միջնորդավորված միջուկային փոխազդեցություն, որն արտահայտվում է **աղբեսանտ-տեքստ-աղբեսատ** սխեմայով: Աղբեսանտը տեքստի, հաղորդագրության հեղինակ-ուղարկողն է, իսկ աղբեսատը՝ նա, ում այն ուղղված է: Սովորական հաղորդակցության ընթացքում տեքստը ստեղծելու համար աղբեսանտն օգտվում է լեզվից, որն արդեն գոյություն ուներ իրենից առաջ, իսկ գեղարվեստական հաղորդակցության ընթացքում նա կրկնակի դերակատարում ունի, քանի որ պետք է ոչ միայն տեքստը ստեղծի, այլև դրա գեղարվեստական լեզուն: Աղբեսատի և աղբեսանտի դիրքորոշումների ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողնում կողերը:

Պրագմատիկական տեսանկյունից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում գովազդը: Գովազդային մասնագետի խնդիրներն ընկած են հենց պրագմատիկայի ոլորտում, քանի որ գովազդն ուղղված է հենց աղբեսատին:

**Իսկ ո՞րն է գովազդի առանձնահատկությունը:** Գովազդը զանգվածային մշակույթի դրսևորում է, իսկ զանգվածային մշակույթի բոլոր տեքստերը, Ու.Էկոյի կարծիքով, մեծ մասամբ ձևավորվում են լսողի ազդեցության տակ: Գովազդային տեքստը (տեքստը լայն իմաստով) նախապատվությունը տալիս է գլխավորապես

վիզուալ պատկերներին: Դրա պատճառը ոչ միայն այն է, որ դրանք առավել ունիվերսալ բնույթ ունեն, ինչը համապատասխանաբար արագացնում է ընկալումը, այլ՝ գլխավորապես այն, որ դրանք վերամշակվում են ուղեղի մյուս կիսագնդում՝ թույլ չտալով ընկալման ռացիոնալիզացիան, որը տեղի է ունենում վերբալ տեքստի ժամանակ: Ի տարբերություն վերբալ տեքստի՝ գովազդային պատկերը սկզբունքորեն չի ենթարկվում ճշմարիտ-կեղծ չափանիշներով բնութագրմանը, քանի որ պատկերն ընկալման մեջ ավելի իրական է քան վերբալ բնութագրերը, այդ պատճառով դա ավելի դժվար է ժխտել:

Գովազդային հետազոտությունները հանգեցրել են նույնիսկ հաղորդակցական որոշ օրենքների ձևակերպմանը, առանց որոնց հնարավոր չէ այդ ոլորտում արդյունավետ աշխատող տեսություն կառուցել: Օր., ճապոնացիները պարզել են, որ լուրերի հաղորդման ժամանակ առաջին 1,5 բուպեն լսվում է առավել ակտիվ, իսկ հետո ուշադրությունը ցրվում է: Դրա համար արևմուտքում քաղաքագետներին սովորեցնում են, որ հարցերին պատասխանելիս դրանից ավելի չխոսեն: Սա նշանակում է, որ տեքստը պետք է ոչ միայն համապատասխան լինի լսարանին, այլև կրի ազդեցության առավել արդյունավետ մոդելները:

Ցանկացած գովազդ գործ ունի պատմողական երեք մակարդակների հետ՝ ֆիզիկական, սոցիալական, սիմվոլիկ: Իրական օբյեկտն իր հատկություններով կարող է նկարագրվել ֆիզիկական մակարդակում: Բայց երբեմն դա բավական չէ, քանի որ բոլոր լվացքի փոշիները,



յոգուրդները, ծամոնները ավելի շուտ միմյանց նման են քան տարբեր: Այդ պատճառով, անհրաժեշտություն է առաջանում օբյեկտի բնութագրությունը մյուս մակարդակները՝ սոցիալականը և սիմվոլիկը, տեղափոխելու: Հենց դրանք կարող են բավականաչափ տարբերակել օբյեկտը անհատական կամ զանգվածային գիտակցության մեջ ամրագրելու համար: Երբ ծամոնի գովազդը շեշտադրում է ծանոթանալու հնարավորությունը, այն «աշխատում» է սոցիալական մակարդակում, իսկ երբ ընդգծում է ծամոնում շաքարի բացակայությունը՝ սիմվոլիկ մակարդակում, քանի որ այդ դեպքում նկատի է առնվում ավելորդ քաշի դեմ պայքարի համարյա արսիմաստիկ ճշմարտություն դարձած սիմվոլը:

Գովազդային տեքստը օժտած է երկակի բնույթով. այն ձևավորվում է վիրտուալ դաշտում, բայց մոդելավորում (ծրագրավորում) է սպառողի վարքագիծը իրականի դաշտում: Վիրտուալ դաշտում թույլատրելի է իրականից ցանկացած շեղում, որը կարող է հանգեցնել, օր., շոկոլադի գովազդում թզուկների հայտնվելուն: Իրականից այդպիսի շեղման պատճառով գովազդը հանդես է գալիս որպես ռեյաստիվիատական տեքստ, ինչի արդյունքում առաջանում է վիրտուալ, միմյանց հետ չհատվող աշխարհների մի ամբողջ բազմություն:

### Գրականություն

Ֆ. դը Սոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Եր., 2008, էջ

- Р.Барт. Основы семиологии. В кн.: “Структурализм: «за» и «против»”. М. 1975 с.139-147, 157-163.
- Ж.Бодрийяр. Симулякры и симуляция. Тула, 2013, с.18-23.
- Ж.Делез. Логика смысла. М., 1995, с. 229-231, 348-399:
- А.Ф.Лосев. Знак, символ, миф, М., с.114-128.
- Ч.Пирс. Логические основания теории знаков. Спб., 2000, с. 46-53, 186-189.
- Г.Фреге. Смысл и денотат. В кн. Е.С.Никитина: “Семиотика. «Приложения»”, М., 2006, с.287-317.

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ի՞նչու առաջացավ նշանագիտությունը  
Հիմնավորել նշանագիտության մետագիտական բնույթը  
Որտե՞նք են նշանագիտական հետազոտությունների  
մասնավոր ոլորտները  
Ի՞նչ է նշանը  
Ե՞րբ մի առարկա կարող է մյուսի համար նշան լինել  
Ի՞նչ է նշանային իրավիճակը  
Բերել նշանային իրավիճակի օրինակ  
Ինչպիսի՞ն է նշանի կառուցվածքը  
Բերել դիադիկ և տրիադիկ մոդելների օրինակներ  
Բերել օրինակներ նշանների պիրայան դասակարգմանը  
համապատասխան  
Ի՞նչ առանձնահատկություն ունի լեզվական նշանը  
Ի՞նչը կարելի է համարել լեզվական նշանի արտաքին կողմ,  
իսկ ի՞նչը՝ ներքին  
Ո՞րն է լեզվական նշանի սոսյուրյան պատկերացումը  
Օրինակների վրա ցույց տալ նշանի արտահայտության և  
բովանդակության պլանները  
Բերել լեզվական և ոչ լեզվական նշանների օրինակներ և  
ցույց տալ դրանց նշանակիչն ու նշանակյալը  
Ի՞նչ է նշանակում լեզվական նշանի պայմանականության  
սկզբունքը  
Ի՞նչ ենք հասկանում «լեզվական նշանի արժեք» ասելով  
Բերել լեզվական նշանների օրինակներ և ցույց տալ նրանց  
արժեքը  
Ի՞նչ են նշանային համակարգերը

Ի՞նչ նշանակություն ունի լեզվի ու խոսքի սոսյորոյան  
տարանջատումը  
Ներկայացնել «դիախրոնիա» և «սինխրոնիա»  
հասկացությունները  
Ինչպիսի՞ հարաբերություններ կան նշանագիտական  
համակարգերի միջև ըստ Բենվենիստի  
Ինչպե՞ս են զարգացել բնական լեզուները  
Ի՞նչ են ֆոնեմաները և մոնեմաները  
Բերել ֆոնեմաների և մոնեմաների օրինակներ  
Ի՞նչ է սեմիոզիսը  
Ի՞նչ է ուսումնասիրում սինտակտիկան  
Հնարավո՞ր է արդյոք մաքուր սինտակսիսի գոյությունը  
Որո՞նք են սինտագմատիկական և պարադիգմատիկական  
հարաբերությունները  
Բերել սինտագմատիկական և պարադիգմատիկական  
հարաբերությունների օրինակներ  
Ի՞նչ է ուսումնասիրում սեմանտիկան  
Արդյո՞ք միննույնն են լեզվական նշանի իմաստը և  
նշանակությունը  
Կարո՞ղ է լեզվական նշանն ունենալ իմաստ, բայց չունենալ  
նշանակություն: Բերել օրինակներ  
Արդյո՞ք կարելի է նույնացնել նշանի նշանակությունը  
դրանով նշանակվող առարկայի հետ  
Ի՞նչ է ռեֆերենցիան  
Արդյո՞ք կարող է լինել նշան, որ չունենա նշանակյալ և  
բաղկացած լինի միայն նշանակիչից  
Ի՞նչ է սիմուլյակը  
Բերել սիմուլյակրի օրինակներ

Որո՞նք են դենտատիվ և կոննոտատիվ համակարգերը  
Բերել դենտացիայի և կոննոտացիայի օրինակներ  
Ինչպիսի՞ն է օբյեկտ-լեզվի և մետալեզվի  
փոխհարաբերությունը  
Ի՞նչ է կողը  
Ո՞րն է նշանի և կողի տարբերությունը  
Ի՞նչ է ուսումնասիրում պրագմատիկան  
Ո՞րն է պրագմատիկայի հետ կապված Պիրսի  
նորամուծությունը  
Ի՞նչ է տեքստը  
Բերել նշան-տեքստ փոխհարաբերության օրինակ  
Ի՞նչ նպատակ է հետապնդում տեքստի հռետորական  
վերլուծությունը  
Ո՞րն է տեքստի վերաբերյալ Բախտինի պատկերացումը  
Ո՞րն է գովազդի պրագմատիկ նշանակությունը  
Նշանագիտական վերլուծության ենթարկել որևէ սիմվոլ  
Բերել որևէ գովազդի օրինակ և նշանագիտական  
վերլուծության ենթարկել  
Որևէ հեքիաթ կամ առասպել ենթարկել նշանագիտական  
վերլուծության

ՍՈՒՍԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՆՇԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ուսումնամեթոդական ուղեցույց

(32 ՇՄՄ)



Տպագրված է «Լուսարաց հրատարակչատան» տպարանում

ՀՀ, Երևան, Պուշկինի 46

Հեռ.՝ +374 (10) 53 96 47, +374 (55) 78 47 87

E-mail: lusabats@netsys.am, lusabatc@mail.ru www.lusabats.am

Չափաը՝ 60x84 1/16: Տպ. մամուլ՝ 3,8, Տպարանակը՝ 100 օրինակ: